ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

№ 3—4, 1944

ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

ԳՎԱՐԴԻԱՅԻ ԿԱՊԻՏԱՆ ՎԱՐԴԳԵՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՕՐԱԳՐԻՑ

Հայրենական պատերազմի ռազմաճակատում զոհված, գվարդիայի կապիտան Վարդգես Վարդանյանը հայ ժողովրդի հերոսական զավակներից մեկն է։

Վարդգես Մարզարի Վարդանյանը ծնվել է 1910 թվին Իգդիրում։ Սկզբնական կրթությունն ստացել է Իգդիրում և Ղուրդուզուլի գյուղում։ Մանուկ հասակում նա զրկվում է հորից։

Իմպերիալիստական պատերազմի տարիներին, կոտորածների, սովի և ավերումների պատճառով Վարդգեսի մայրը գաղթում և բնակություն է հաստատում Ղուրդուզուլու շրջանի Նոր-Արմավիր գյուղում։ Սովից փրկելու համար մայրն իր որդի Վարդգեսին տանում է Ալեքսալ (այժմ՝ Լենինական) և հանձնում մանկատուն։ Վարդգեսը չորս տարի (1919—1922 թ.թ.) մնում է մանկատանը։ Այնուհետև նա վերադառնում է մոր մոտ՝ Նոր-Արմավիր։ Հինգ տարվա ընթացքում ավարտում է Ղուրդուզուլու յոթամյա դպրոցը։ Ցանկանալով շարունակել ուսումը, Վարդգեսը գնում է Երևան և ընդունվում բանֆակ։ 1927—1931 թ.թ. սովորում է բանֆակում։ Վարդանյանին, իբրև ընդունակ ուսանողի, ուղարկում են Մոսկվա՝ էլեկտրո-մեխանիկական ինստիտուտում սովորելու, սակայն, կեռ ինստիտուտը չավարտած, մեկնում է Եյսկ՝ ռազմա-օդային դպրոց։ 1935 թվին ավարտում է դպրոցը գերազանց գնահատականներով։ Նրան պահում են դպրոցում որպես օդաչու-հրահանգիչ։ 1937 թվին Վարդգեսին ուղարկում են Կիև՝ Դնեպրի օդային էսկադրիլիան, որպես օդակի հրամանատար։ Այնտեղ նա աշխատում է մինչև Հայրենական պատերազմը։ Հայրենական պատերազմի առաջին օրերին Վարդանյանը նշանակվում է Սևաստոպոլի օդային ուժերի 8-րդ գնդի գրոհիչ օդաչու։ Սևաստոպոլի հերոսական պաշտպանության առաջին օրերից մինչև վերջին օրը Վարդանյանը ցուցաբերել է արիություն, անձնազոհություն, որի համար երկու անգամ պարգևատրվել է մարտական «Կարմիր Դրոշ»-ի շքանշանով։ Սևաստոպոլից հետո Նրան տեղափոխում են Անդրկովկաս՝ Ռազմա-օդային դպրոցում կադրեր պատրաստելու համար։ Սակայն, ցանկանալով գնալ ռազմաճակատ, դիմում է հրամանատարությանը և մեկնում Տելենջիկ՝ մարտական թռիչքներ կատարելու համար։

Վարդանյանի անձնական հաշվում գրանցված է 118 մարտական թռիչք։ Նա ոչնչացրել է թշնամու 26 տանկ, 23 պահականավ ու բարժա, 80 ավտոմեքենա բեռներով ու զինվորներով, 12 հազարից ավելի հիտլերականներ։ Վարդանյանը զոհվել է 1943 թ. հոկտեմբերին։

Վարդգես Վարդանյանի օրագիրը, որ արժեքավոր փաստաթուղթ է նրա

փայլուն կերպարը գծելու համար, Հայրենական պատերազմի պատմության կաբինետին տրամադրեց նրա կին Գոհար Վարդանյանը։

Ստորև տպագրում ենք հատվածներ օրագրից։ Օրագիրը, որ ռուսերեն է, տպագրության համար պատրաստել է Հայրենական պատերազմի պատմության կաբինետի կրտսեր գիտական աշխատող բնկ. Սեդա Ստամբոլցյանը։

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Պատմության Ինստիտուտի Հայրենական պատերազմի
պատմության Կաբինետ

1943թ. մայիսի 30
Բոգոսլովո.

Որոշեցի օրագիր պահել։ Պատերազմի օրագիր. չէ՞ որ այնքան շատ հետաքրքիր բան կա և ինչու հենց սկզբից չեմ գրել, իսկ գրելու շատ բան է եղել։ Ռազմական օդաչուի օրագիր։ Կարծում եմ, որ արժեքավոր շատ բան կլինի։ Ցավում եմ, որ ուշացել եմ։ Չէ՞ որ սկսել եմ կռվել 1941 թ. նոյեմբերի 22-ից։ Ակտիվ կերպով մասնակցել եմ Սևաստոպոլի—այդ հերոս քաղաքի ամբողջ պաշտպանությանը, զգացել եմ նրա դժվարությունները, հիասթափությունները, հույսերը և բերկրանքը, վիշտն ու տխրությունը։ Ի՞նչպես այդ բոլորն անցավ և ոչինչ չմնաց ապագայի համար։ Կաշխատեմ վերականգնել, բայց կհաջողվի՞ արդյոք։ Մ'չերբեք։

Ես այժմ գնում եմ պաշտպանելու մեծ քաղաքը՝ Լենինի քաղաքը։ Սևաստոպոլից սկսեցի, շարունակում եմ Լենինգրադում։ Երկու մեծ հերոս քաղաքների պաշտպանության մասնակցի հպարտության զգացմունքը։ Ե՞րբ կլինի վերջը, չգիտեմ։ Արդյոք նշանակություն ունի՞ դա։ Շուտով կսկսվի իմ ռազմական կյանքի երկրորդ էտապը։

Ես էսկադրիլիայի հրամանատար եմ, մարտական օդաչու, կատարել եմ 88 գրոհային թռիչք, ունեմ «Կարմիր Դրոշ»-ի երկու շքանշան։ Ահա առաջին էտապը։ Այստեղ դաստիրակել և ապագա մարտերի համար պատրաստել եմ երիտասարդ օդաչուների և հրաձիգների։ Ես նրանց սիրում եմ, հարգում ու վստահում։ Նրանց հետ կարելի է լավ կռվել և պիտի կռվել։ Նրանք իմ դավակներն են, մեր մեծ հայրենիքի դավակները, որոնք պատրաստ են իրենց կյանքը զոհաբերելու նրա համար։ Որքան լավ, որքան նվիրված, հիանալի, պարզ ու անհոգ, ուրախ տղաներ են։ Նրանք այժմ գտնվում են օդանավակայանում։ Մարտում քեզ չեն դավաճանի, թեև դեռևս ոչ մի անգամ մարտում չեն եղել։ Սակայն նրանք դյուցազուններ են։ Ահա նրանք՝ իմ սիրելի Մաքսյուտը։ Այո, նրանք բոլորն էլ իմ սիրելիներն են՝ Պոլոխատսկին, Վելիդուբան, Գոլիկովը, Վորոբյովը, Դուբինան, բոլորն էլ վառվռուն երիտասարդներ են։ Նրանց մասին կարելի է գրել, բայց թող թերթերը գրեն։ Ես նրանց գիտեմ, սակայն գրելը դժվար է, նույնիսկ անհնարին։

Հունիսի 3.

Երեկ թռիչք գործեցինք. ռմբակոծեցինք կործանիչների պաշտպանությամբ։ Լավ են թռչում, արագ գլխի ընկնում, հրամանատարի կամքը ճիշտ կատարում։ Այսօր ռազմաճակատ ուղարկվեց շտաբը, ամբողջ դույքը. վաղը կամ օրերս մենք կթռչենք կռվելու։ Այնտեղ ծանր մարտեր են տեղի ունենում, կորուստները մեծ են։ Բայց մթթե կարևորն այդ է։ Կարևորն

այն է, թե մենք որքան օգուտ կտանք հայրենիքին, որքանով կարդարացնենք ծախսված միջոցները, որքան գերմանացի կսպանենք մենք։

Սպանիր գերմանացուն։ Սպանիր նրան, եթե ուզում ես ապրել։ Սպանել հանուն հայրենիքի, հանուն մեր գեղեցիկ ապագայի, հանուն նրանց, ովքեր կմնան կենդանի։

Սպանել կյանքի համար։ Հակասական է, չէ՞։ Սակայն այդպես է դիալեկտիկան, պատերազմի օրենքը։ Առավել ես մեր Հայրենական արդարացի պատերազմի օրենքը։

Մեզ սպասում են ծանր մարաներ։ Որքան փորձություններ, որքան անակնկալներ, պատահականություններ։ Թերևս մահն էլ է մոտ։ Ո՞վ գիտե։ Հիմա ոչ ոք չգիտէ, թե դեռ որքան է ապրելու։ Որքան տարօրինակ է։ Իսկ պատերազմը հետաքրքիր է հեռվից։ Սարսափելի արհեստ է։ Արժե արդյոք, որ մարտիկը մտածի ու խորհի այդ մասին։ Ո՛չ։

Թշնամու նկատմամբ տածվող ատելությունը, նրան, որտեղ էլ որ նա գտնվելիս լինի, ոչնչացնելու մշտական ձգտումը, խլացնում է բոլոր ինտիմ, մասնավոր խոհերը։ Հետաքրքիր է։ Իսկ այնպես ցանկանում ես ապրել, ցանկանում ես զգալ։ Մթթե միայն ես եմ այդպես։ Ո՛չ, ոչ միայն ես։

Հունիսի 5
Բոգոսլով.

Էսկադրիլիան հանձնելու և վերստին դեպի Սև ծով վերադառնալու հրաման ստացա։ Զվիճակվեց մասնակցելու Լենինգրադի պաշտպանությանը։ Ցավալի է։ Այո, ցավալի է բաժանվել այն օդաչուներից, որոնց նախապատրաստել ես կռվելու, որոնց սովորեցրել ես ու սովորեցրել ես կռիվ մղելու։

Չէ՞ որ ես նրանց սիրեցի այդ կարճ ժամանակամիջոցում։ Հիանալի մարդիկ էին, մեր Հայրենիքի հավատարիմ զավակներ։ Ինչպե՞ս այս բոլորը լավ չի ստացվում։ Բայց ոչինչ չես կարող անել. թերևս այդպես էր հարկավոր։

Մթթե կարող ես հասկանալ այն բոլորը, ինչ որ կատարվում է շուրջդ։ Ցավալի է. օդաչուները լավ, հիանալի տղաներ էին։ Ես նրանց վրա վստահ էի, անսահմանորեն հավատում էի նրանց և գիտեի, որ մարտում նրանք երբեք չէին դավաճանի։ Թող նրանք մնան իմ հիշողության մեջ՝ ընկերներ Մաքսյուտան, Սովոչատսկին, Վորոբյովը, Գոլիկովը, Վելիգուրան, Դուրինան, Խալյապինը, իմ քաղ-գծով տեղակալ Գրիչինը, Բագեկինը, օդակի հրամանատար Կրատեիչը, Շկոդան, շտուրման Լոյչեսկին, հրաձիգներ Իլիկովը, Յակուշինը, Պեսացկին, Ռեսելը, Լոզվինովը, Տիտովը, Լոսկուտովը, Պովալը։ Իմ աշխատանքը զուր չի կորչի. այն երևան կգա ապագա մարտերում։ Ցանկանում եմ նրանց երջանկություն ու հաղթանակ։

Շուտով պետք է բաժանվել։ Նորից բռնելու եմ քո ճանապարհը, Սև ծով, դեպի քո հայելափայլ ջրերը։ Թերևս վիճակվել է, որ ես իմ կյանքը, հանուն իմ սիրելի Հայրենիքի, թաղեմ քո ալիքների տակ։ Ո՞վ է իմանում։

Հունիսի 12
Մոսկվա

Արդեն մի քանի օր է, որ գտնվում եմ Մոսկվայում, մեծ քաղաքում։ Ինչպե՞ս է փոխվել Մոսկվան այն օրից, երբ ես 1933 թվականին հեռացա այնտեղից։ Փառահեղ է ու գեղեցիկ։ Մեր հարազատ Մոսկվան, իմ սիրելի Մոսկվան։ Այսօր պետք է մեկնեմ հարավ։

Հունիսի 16
Արմավիր.

Մեր դնացքը կանգնած է Արմավիր քաղաքի կայարանում։ Գերմանացիները եղել են այստեղ։ Քաղաքը չի կարելի ճանաչել։ Կատակ բան է ասել, որ մեր քաղաքում տիրություն են արել գերմանացիները։ Նրանք ավերել, նրանք կողոպտել ու ոչնչացրել են բնակչությանը և ծայրուն քաղաքի փոխարեն մենք տեսնում ենք միայն ավերակներ։ Ամբողջ ճանապարհին, Տամրովից մինչև Ստալինգրադ, և այստեղ երևում են գերմանական գաղանությունների, բարբարոսությունների հետքերը։

Սակայն դրա հետ միասին երևում են մեր Կարմիր Բանակի հարվածների արդյունքները. տասնյակ կիլոմետրերով ձգված են գերմանական ջարդված տանկերի, հրանոթների, ավտոմեքենաների, վագոնների գերեզմանոցները և այլն։ Սիրտս հրճվում է, երբ նայում եմ այդ բոլորին և զգում հպարտություն, վստահություն մեր ուժի նկատմամբ, մեր Ստալինի իմաստության նկատմամբ, այն բանի նկատմամբ, որ մենք կհաղթենք ու կջախջախենք գերմանացուն։

Հուլիսի 13
Գելենջիկ.

Երկրորդ էսկադրիլիայի հրամանատարն եմ։ Հուլիսի 13-ին, երկարտև ընդմիջումից հետո, կատարեցի առաջին մարտական թռիչքը։ Շարունակ թռչում էինք ծովի վրայով և որոնում փոխադրական միջոցներ, բայց չգտանք, դրա համար էլ դրոհեցինք գերմանական պաշտպանության առջևի եզրի վրա։ Նորից կռվում եմ. թե դեռ որքան հարկ կլինի կռվելու, դժվար է ասել։

Հուլիսի 24
Գելենջիկ.

Այսօր առավոտյան մարտական առաջադրանք ստացա՝ ոչնչացնել հակառակորդի արագընթաց դեսանտային բարժան։ Թռիչք գործեցի 8 Իլ-երի գլուխ անցած՝ կործանիչների պաշտպանությամբ։ Սակայն, դժբախտաբար, այդ առաջադրանքը չկատարվեց օդաչու Բոդդանովի սխալ գործողության պատճառով։ Ինձ համար ավելի ամոթալի դեպք չէր եղել։ Այսօր ամբողջ օրը իմ տրամադրությունը վատ է... Բայց ոչինչ, ես հետագայում ցույց կտամ, որ դիտեմ, սիրում եմ ու կկռվեմ, կկատարեմ հրամանատարության հրամանը, ինչպես այդ վայել է ստալինյան օդաչուին։ Ողջ մնամ, այդ բանը ցույց կտամ ոչ թե խոսքով, այլ գործով։ Զէ՞ որ կռվում, պաշտպանում եմ իմ հայրենիքը, սիրելի հայրենիքը։ Իսկ ինչ բան է հայրենիքը։ Դա իմ սիրելի դուստր Իմոչկան է, դա իմ հիանալի կին Գոհարն է, այդ մեր մայր ժողովուրդն է, այդ մենք ենք, մեր երկրները, մեր Ծովերը, մեր ամբողջ սքանչելի հայրենիքը, մենք։ Ես սիրում եմ այդ ամենը, սիրում եմ ավելի քան իմ կյանքը։ Այդ հայրենիքի համար պատրաստ եմ զոհաբերելու իմ կյանքը, բայց այդ կյանքը երբեք էժան չեմ տա։ Երբ ես զոհվեմ և որևէ մեկը կարդա այս տողերը, թող վստահ լինի, որ ես իմ կյանքը տվել եմ հպարտ, որպես բոլշևիկ, որն անսահման նվիրված է իր հայրենիքին, իր պարտիային և իր առաջնորդ ընկեր Ստալինին։

Մենք հարձակվում ենք։ Մենք սովորել ենք դիպուկ հարվածել գերմանացիներին ոչ միայն ձմռանը, այլև ամռանը։ Մենք հարձակվում ենք։ Բավական է որքան նահանջի դառնություններ, վիրավորանք կրեցինք։ Մենք

հրճվում ենք, մենք ցնծում ենք, մենք հաստատ առաջ ենք գնում։ Պատերազմի մեջ և պատերազմի համար կարող է ավելի լավ և ավելի վեհ դղացժունք ու հպարտություն լինել, քան մեր ուժերի, մեր հաղթանակի նկատմամբ ունեցած հպարտությունը։ Դեռ շատ դժվարություններ, պատահականություններ են սպասում մեզ։

Սակայն արդեն երևում են, երևում մեր ապագայի, մեր փայլուն, հիանալի հաղթանակի վախճանի ուրվագծերը։ Կարժանանամ արդյոք այդ օրվան։ Սակայն միլիոնավորներ ողջ կմնան, կզգան, կշոշափեն մեր ջանքերի պտուղները և շնորհակալություն կասեն մեզ։ Եվ նրանք վրեժ կլուծեն, վրեժ կլուծեն թշնամուց այն բոլորի համար, ինչ որ թշնամին արել է մեր երկրում։ Արյան փոխարեն արյուն, արցունքի փոխարեն արցունք, ավերածության փոխարեն ավերածություն։ Մենք պետք է գերմանացիների հետ դաշիվ փակենք առանց պարտքի, այնպես, որ նրանք տասնյակ ու հարյուրավոր տարիներով հիշեն ռուսական պանծալի զենքը։

Ռուսաստան կարելի է մտնել, սակայն այնտեղից դուրս գալը ամենքին չի հաջողվի։

Օգոստոսի 4
Գելենջիկ.

Դամի է։ Նորդոստ է փչում։ Այսօր երկրորդ օրն է, որ թռչել հնարավոր չէ։ Թերևս վաղը կվերջանա և նորից կսկսենք կռվել։ Ռազմաճակատներում գործերը լավ են ընթանում, շատ լավ։ Մենք խփում ենք գերմանացիներին, աստիճանաբար քշում դեպի արևմուտք։ Բավական է, որքան ամառը նահանջեցինք։ Հասել է հարձակման ժամանակը։

Օգոստոսի 12.

Ամսիս 10-ին 7 Իլ.-երից բաղկացած խումբը տարա հակառակորդի ջրային փոխադրական միջոցների վրա։ Թռիչքը կատարվում էր օդերևութաբանական դժվարին պայմաններում՝ վատ տեսանելիություն, ցած ամպամածություն ծովի վրա։ Չրասույզ արինք մեկ բարժա և մեկ պահակատեր։ Վերադարձին գրոհեցինք մեկ «Մ—109» տիպի ինքնաթիռի վրա, վիրավորեցինք մեկ օդաչուի ու հրաձիգի։ Առաջադրանքը կատարեցինք։ Վերջերս թռիչքի ժամանակ ընդհարվեցինք ՅԱԿ-ի հետ, ինչպես ոչ ոք չսպանվեց, չգիտեմ։ Արդեն 93 մարտական թռիչք ունեմ։ Միգա՞ս մաքուր է։ Տալիս եմ ամեն բան, որպեսզի կատարեմ հրամանատարության առաջադրանքը։ Ես բոլորովին երկյուղ չունեմ, մարտի եմ գնում առանց ետև նայելու։ Հայրենիքը, պարտիան ամեն բանից թանկ են և չեմ ցավում, եթե զոհվեմ մեր մեծ գործի համար, մեր Հայրենիքի ազատագրության գործի համար։ Ի՞նչ կա ավելի վեհ, ավելի կարևոր, քան մեր սրբազան պատերազմը։

Օրեցօր ավելի ենք կատարելագործվում, որպեսզի ավելացնենք մեր թռիչքների էֆեկտիվությունը։

Օգոստոսի 17.

Գվարդիական դրոշ. սրքան վեհ, որքան հիանալի է հնչում։ Օգոստոսի 10-ին գեներալ-լեյտենանտ Պետրովը Գվարդիական դրոշ հանձնեց մեր զորամասին։ Մեծ, բիրկրալի որ էր ինձ համար։ Այդ դրոշը պարտավորեցնում է է՛լ ավելի ուժգին հարվածել գերմանացիներին, է՛լ ավելի անխնա ոչնչացնել նրանց մինչև լիակատար հաղթանակը։

Վաղը կթռչենք լուրջ առաջադրանք կատարելու. ինչով կվերջանա,

դժվար է նախագուշակել։ Սակայն մեր նշանաբանն է՝ անհաղթանակ կամ մահ։ Եթե զոհվեմ, ապա կզոհվեմ միայն որպես հաղթող։

Օգոստոսի 18
Գելենջիկ.

Երեկ կենտրոնացված հարված հասցրինք հակառակորդի Անապայի օդանավակայանին։ Երկրորդ խումբը, որը բաղկացած էր 6 Իլ—երից, տանում էի ես։ Լուսաբացին թռիչք գործեցինք և հանկարծակի առաջինը հասանք օդանավակայանին։ Երբ խումբը գրոհ գործեց, միայն այն ժամանակ գերմանացիները հրետանային կատաղի հրաձգություն սկսեցին։ Սակայն մենք կրակի միջով ճեղքելով հասանք նպատակակետին, ոչնչացրինք գետնի վրա եղած գերմանական ինքնաթիռները։ Նախնական արդյունքներով ոչնչացվեց 6 և փչացվեց 4 ինքնաթիռ։

Հիանալի էին մարտնչում իմ երիտասարդ օդաչուներ Բենիխանովը, Մելնիկովը, Միխայլովը։ Նվիրված, համարձակ հիանալի օդաչուներ են, ես նրանց սիրում եմ և գրկում ծովափին։

Հրամանատարության առաջադրանքը կատարված է։ Այսօր պետք է հարձակում գործեինք Թշնամու ջրային փոխադրական միջոցների վրա, բայց քամին խանգարեց։ Թիրևս վաղը կամ վաղը չէ մյուս օրը կատարենք հարձակումը։ Նորից ժտել եմ պատերազմի՝ մեծ, արդարացի ու ազատարար պատերազմի օրբիտի մեջ՝ հանուն իմ Հայրենիքի, հանուն իմ ու մեր սիրելի հոր, զորավար ընկեր Ստալինի։

Մենք այս տարի Թշնամուն լավ ենք ջախջախում։ Մենք այլևս չենք տեսնելու պարտության դառնությունները, այլ վայելելու ենք միայն հաղթանակի ցնծությունը։ Որքան լավ է։

Օգոստոսի 26
Գելենջիկ.

Այսօր գրոհեցինք Տեմրյուկ նավահանգստի և Թշնամու ջրային փոխադրական միջոցների վրա։ Հարվածը հիանալի էր, ամեն ինչ այրվում էր։ Շատ բան ցրասույց արինք։ Վերադարձին մեզ վրա գրոհեցին Ֆորտ և մեսսերները։ Երկու հոգու՝ Պոպովին և Մելնիկովին կորցրինք։ Բայց հույս կա, որ նրանք կենդանի են և կվերադառնան։ Ես տարա երկրորդ վեցյակը։ Նպատակակետի վրա չփոթ առաջացավ. չգիտեին ցամաքի վրա կռվել, դրա համար էլ ցիրուցան եղան և կորուստ ունեցան։ Կրակն ուժեղ էր, սակայն ճեղքեցինք ու հաջողությամբ հասանք նպատակակետին։ Թող այդ թռիչքը նվեր լինի իմ մայր հայրենիքին։

Դեհարը հաճախակի է գրում։ Որքան կարոտել եմ նրան ու աղջկաս, ուզում եմ գրկել, համբուրել և համբուրել։

Ես հայ ժողովրդի զավակ եմ։ Սիրում եմ այդ փոքր, լավ ժողովրդին։ Սիրում եմ Հայաստանի լեռները, սիրում եմ Հայաստանի քաղաքները, սիրում եմ նրա դաշտերն ու սրընթաց ջրվեժները, սքանչելի այգիներն ու բոստանները, ամեն, ամեն բան։ -

Գերմանացիներն ուզում էին նվաճել նաև Հայաստանը։ Դա նրանց չի հաջողվի։ Բավական է, հայ ժողովուրդը շատ վիշտ ու տառապանք է տեսել։ Մենք, Հայաստանի զավակներս, ռուս ժողովրդի զավակների հետ միասին, մենք, մեր մեծ երկրի զավակներս, կհարվածենք գերմանացիներին, կջախ-

ջախեցնք նրանց, որպեսզի մեր երկիրը մեզ շնորհակալություն հայտնի, իսկ մեր առաջնորդն ասի՝ լավ։ Զորամասում չորս հայ կա։ Սերգիյանին այսօր կորցրինք, մնացին տեխնիկ Պողոսյանը, օդաչու Պողոսյանը և ես։ Իսկ մենք դեռ կկռվենք։

Օգոստոսի 28.

Երեկ, վաղ առավոտյան, թռիչքի ժամանակ զոհվեց մեր էսկադրիլիայի հրամանատարներից մեկը՝ կապիտան Ստրիգը, հիանալի օդաչու, սքանչելի մարտիկ, հայրենիքին նվիրված դավակ, շատ հարգված ընկեր։ Ցավալի է, շատ ցավալի։ Սակայն մենք լաց չենք լինում, դրա ժամանակը չէ։ Թող մեր թշնամիներն իմանան, որ մենք դա էլ չենք մոռանա մեր մարդկանց արյան համար վրեժ կլուծենք արյունով. Ստրիգի փոխարեն կոչնչացնենք գերմանական շատ սրիկաներ։

Այսօր հաղորդեցին, որ իմ օդաչուներ Պոպովն ու Մելնիկովը կենդանի են. կենդանի է նաև Սերգիյանը։ Որքան լավ է ու բերկրալի։ Շուտով նրանք կգան մեր ընտանիքը։

Տնից նամակ ստացա։ Նույնիսկ իմ աղջիկ Իմոչկան էլ է գրել, թե պապա, արի։ Նրա առաջին նամակն է, հենց որ կարդացի, սիրտս բարախեց։ Դստրիկ իմ, իմ ուրախություն, իմ երջանկություն, որտե՞ղ ես դու այժմ, իմ խելոք աղջիկ՝ Նա իմ մեծ ու թանկագին աղջիկն է, թեև նամակն ինքն էլ չի գրել, բայց նրա սիրելի թաթիկները մասնակցել են գրելու պրոցեսին։ Ավելին ինչ եմ ուզում։

Սեպտեմբեր 2
Դեկենցիկ.

31-ին, մութն ընկնելուն պես, հարձակում գործեցինք Տեսրյուկ նավահանգստի վրա։ Երբ հասանք, մութն իջել էր։ Ես առաջնորդում էի երկրորդ խումբը՝ երեք Իլ-ներ։ Գրոհեցինք շատ լավ. ջրասույզ արինք ԱԻՖ և առաջ բերինք հրդեհի օջախ։ Մեզ վրա կատաղի կրակ բաց արին բոլոր կողմերից. արկերի պայթյուններն այնքան մոտ էին, որ լսվում էր նրանց ձայնը։ Մեծ դժվարությամբ ազատվեցի այդտեղից։ Վերադարձանք դիշերով մեկ-մեկ, որովհետև ես կորցրի տարածության կողմնորոշումը, բայց տեղ հասանք։ Մարտական յուրաքանչյուր թռիչքը ուժեղացնում է մեր ատելությունը, մեր այրող ատելությունը դեպի թշնամին։ Երբեմն այնքան ենք տարվում, որ մոռանում ենք, թե կրակում ենք վերջին արկն ու փամփուշտը։ Հարկավոր է խփել այդ իժերին մինչև նրանց լիակատար ոչնչացումը։ Ահա թե ինչ ենք զգում նպատակակետի վրա։ Վախենում ենք արդյոք։ Ո՛չ, այնտեղ վախ չկա, այնտեղ մնում է միայն մեկ բան՝ անսահման ատելություն, ատելություն դեպի այդ օտար, թշնամի մարդիկ, որոնք զենքով եկել են նվաճելու մեր մարդկանց։ Մարդ են, բայց մարդկային ոչինչ չունեն։ Եվ ուզում ենք սպանել, ոչնչացնել այդ սրիկաներին և մենք որքան ավելի շատ գերմանացի ոչնչացնենք, այնքան մոտ կլինի հաղթանակը։

Ահա այն հարցը, որի մասին ուզում էի գրել, թե ինչ ենք վերապրում և զգում մարտից առաջ։ Առաջադրանքի մշակումը, ինքնաթիռին մոտենալը, նախապատրաստությունը և բուն թռիչքը ինձ ամենևին չեն հուզում։ Երբ մոտենում եմ նպատակակետին, միայն երբեմն է բոպեապես սառն դող անցնում իմ մարմնով, որն անմիջապես անհետանում է, և ես հանգստանում եմ ու այդպես շարունակում մինչև գրոհի վերջը։ Գրոհից

դուրս գալը տեղի է ունենում առանց որևէ աատանման, առանց երկյուղի, հանգիստ, առավելագույն ուշադրությամբ և հանգստությամբ։ Սակայն լարվածությունը որոշ ժամանակ հասնում է մաքսիմումի։ Առաջ պատահում էր, որ երբևիցե մինչև ինքնաթիռին մոտենալու և կաբինայի մեջ մտնելու ժամանակ ես հուզվում էի։ Այժմ այդ բանը չկա։ Ավելի լավ։ Դրա համար էլ կարող եմ ասել, որ ես կռվում եմ համարձակ կերպով, խիզախորեն, ինչպես վայել է ստալինյան օդաչուին։

Սեպտեմբերի 3
Գելենջիկ.

1943 թ. ամառն է. որքան երջանիկ, բերկրալի ամառ։ Ամեն օր նորանոր հաղորդագրություններ են ստացվում մեր հաղթանակների մասին։ Մենք հարձակվում ենք, մենք գնում ենք դեպի արևմուտք։ Մենք գերմանացիներից խլեցինք ամառը՝ նրանց հույսը։ Ով տեսել է պարտության տխրությունները ու վիրավորանքները, ով տեսել է 1941 թվի սարսափելի ամառը, 1943 թվին չի կարող չուրախանալ, պար չգալ իր տեղում, չսքանչանալ մեր հաղթանակներով։ Փառք մեր զորքերին, փառք ռուս ժողովրդին, փառք մեր հայրենիքին և մեր Ստալինին, որը դաստիարակել է այնպիսի հիանալի մարտիկներ, ինչպես մենք, Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի մարտիկներս ենք։

Շուտով այստեղ էլ կսկսվի հարձակումը. մենք պետք է գերմանացիներին դուրս շպրտենք Թամանից, իսկ այնուհետև՝ Ղրիմից։ Մենք կրկնապատիկ, եռապատիկ վրեժ կլուծենք Խերչի համար, Սևաստոպոլի համար, Օդեսայի համար, մենք կդրավենք այդ վայրերը։ Գտեսնեմ արդյոք ես այդ երջանիկ օրը։

Սեպտեմբերի 13.

Զոհվեց իմ օդաչու Պոտապովը։ Երեկ խումբը տարավ դաստակի հրամանատար Պոպովը։ Սեկլացի մարդ չէ, առաջին անգամ էր տանում և կորցրեց լավ օդաչուի, հայրենիքի ուրախ, կենսուրախ ու նվիրված զավակին։ Նրան ցած գցեցին զենիթավորները։ Դառն է, ցավալի, որ կտրեցին երիտասարդ հիանալի օդաչուի կյանքը։ Մենք այդ չենք մոռանա, վրեժ կլուծենք։ Իմ օդաչուները ցանկացան ինքնաթիռից մեկի կողին գրել «Հանուն Պոտապովի»։ Ես թույլ տվի։ Այո, Պոտապովի համար մենք վրեժ կլուծենք։ Ծանր է, շատ ծանր։ Որքան եմ սիրում ես նրանց. նրանք այնպե՞ս լավ մարդիկ են։ Նրանք, մեր այդ ռուս մարդիկ, որքան հիանալի են. բայց պատերազմը—չէ՞ որ մեր ամենքի առաջ կա միայն մեկ ճանապարհ, պատերազմ, իսկ մենք, պատերազմի զինվորներս, գնում ենք պատերազմի, անողոր պատերազմի՝ դաժան ճանապարհով։ Նու, ինչ արած, թող այդպես լինի։ Ավելի ուժգին կկռվենք հայրենիքի համար, սիրելի հայրենիքին կզոհաբերենք ամեն բան և կյանքը, որքան էլ այդ ցավալի լինի։ Սակայն կաշխատեմ պաշտպանել մարդկանց, և եթե անհրաժեշտ է, թե ինքս և թե իմ օդաչուները կդիմենք մահվան հանուն հաղթանակի և հանուն հայրենիքի։